ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՕԳՆՈՂ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ (ԿԱՄ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմին, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը, «Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը, «Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը՝ որպես սոցիալական աշխատանքի, հոգեբանության, սոցիալական ու հատուկ մանկավարժության տարբեր ճյուղերի (սույն հուշագրի իմաստով՝ օգնող մասնագիտություններ) գծով մասնագետների ուսուցում իրականացնող կրթական հաստատություններ (բոլորը միասին այսուհետ՝ Կողմեր), ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններից, գիտակցելով Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման համար օգնող մասնագիտությունների կարևորությունը, նպատակ ունենալով աջակցել օգնող մասնագիտությունների՝ որպես գիտագործնական բնագավառների համակողմանի զարգացմանը, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի արդյունավետ ներդրմանը՝ սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով կրթություն ստացած մասնագետների առաջնահերթ ներգրավման միջոցով, ստորագրելով սույն Հուշագիրը, համաձայնվեցին հետևյալ հարցերի շուրջ.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտներում բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների, մասնավորապես ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացներում սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով մեծ թվով կադրերի ներգրավման, շարունակական համալրման, ինչպես նաև վերջիններիս մասնագիտական ուսուցման ընթացքում գործնական հմտությունների և կարողությունների շարունակական զարգացման կարիքից ելնելով, նախաձեռնում է համագործակցություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի, «Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի, «Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի՝ (այսուհետ՝ մասնագիտական ուսումնական հաստատություններ) հետ՝ սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով կրթության բովանդակության՝ սոցիալական պաշտպանության ոլորտի կարիքներին համապատասխանության բարձրացման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով շրջանավարտների՝ սոցիալական պաշտպանության ոլորտում անհրաժեշտ մարդկային ռեսուրսների համալրման նպատակով համակարգված քաղաքականության իրականացման նպատակով:
2. *Մասնագիտական ուսումնական հաստատությունները պարտավորվում են* սույն Հուշագրի ստորագրումից հետո երեք ամիսների ընթացքում ուսումնասիրել նշված մասնագիտությունների գծով վերջին առնվազն երեք տարիների շրջանավարտների ցանկերը՝ նախարարությանը ներկայացնելով այդ

մասնագետների ներկայիս տեղաբաշխվածության և ինտեգրված սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցներում աշխատելու պատրաստակամության և հնարավորության մասին տեղեկություններ:

3. *Մասնագիտական ուսումնական հաստատությունները* պարտավորվում են Նախարարության հետ համատեղ ձևավորել աշխատանքային խումբ՝ սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով կրթական ծրագրերի՝ ներառյալ արտադրական պրակտիկաների բաղադրիչի, պարբերական վերանայման և սոցիալական պաշտպանության ոլորտի կարիքներին համապատասխանեցման նպատակով:
4. *Մասնագիտական ուսումնական հաստատությունները* պարտավորվում են Նախարարությանը տարբեր միջոցներով տեղեկացնել սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների տեսություններում տեղի ունեցած փոփոխությունների, ժամանակակից առաջավոր պրակտիկաների, նոր սոցիալական տեխնոլոգիաների ի հայտ գալու մասին՝ աջակցելով համապատասխան վերապատրաստման դասընթացների կազմակերպման, համատեղ գիտաժողովների ու սեմինարների կազմակերպման, տարբեր մեթոդական, դիդակտիկ, իրազեկման և այլ նյութերի պատրաստման հարցերում:

5. *Նախարարությունը պարտավորվում է՝*

5.1. Շրջանավարտների մասին մասնագիտական ուսումնական հաստատություններից ստացված տեղեկությունների հիման վրա ընտրել անհրաժեշտ թվով թեկնածուներ,

5.2. Ընտրված թեկնածուների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում, մասնավորապես ինտեգրված սոցիալական ծառայությունների

համակարգում սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով աշխատանքների կազմակերպման և իրականացման ուղղությամբ,

5.3.Վերապատրաստման դասընթացները հաջող ավարտած կադրերին առաջնահերթության կարգով դիտարկել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի տարբեր մակարդակների և տարածքների կառույցներում աշխատանքի համար.

5.4.Մասնագիտական ուսումնական հաստատությունների հայտերի հիման վրա ամեն տարի իր համակարգում գործող սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցներում կազմակերպել վերջիններիս՝ սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով սովորող ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները, ինչպես նաև պարբերաբար մասնագիտական ուսումնական հաստատությունների սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով շրջանավարտների միջոցով համալրել ոլորտում առկա թափուր աշխատատեղերը,

5.5.Մասնագիտական ուսումնական հաստատություններին մասնակից դարձնել բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվելիք քաղաքականության հայեցակարգային և իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքներին, ինչպես նաև կանոնավոր կերպով տեղեկացնել ոլորտին վերաբերող իրավական ակտերի փոփոխությունների և նոր ընդունված իրավական ակտերի մասին.

5.6.Աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններում սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով կրթական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական և լաբորատոր հնարավորությունների ստեղծման գործընթացներին:

5.7.Մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել սոցիալական աշխատանքի և օգնող այլ մասնագիտությունների գծով

կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացին՝ իրազեկելով սոցիալական պաշտպանության ոլորտում առկա կարիքների մասին և ապահովելով կրթական ծրագրերի համապատասխանությունը այդ կարիքներին:

6. Համաձայնագիրը բաց է միացման համար: Կողմերը կարևորում և խրախուսում են Համաձայնագրով նախատեսված նպատակների իրականացման համար սոցիալական աշխատանք և օգնող այլ մասնագիտությունների գծով ուսուցում իրականացնող շահագրգիռ այլ ուսումնական հաստատությունների մասնակցությունը:

7. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է Հուշագրի անբաժանելի մաս:

8. Կողմերի միջև սույն Հուշագրի դրույթների իրականացումից բխող բոլոր վեճերը, տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ Հուշագրի անդամությունից իր նախաձեռնությամբ: Հուշագրի հետագա երկարաձգումը կարող է որոշվել և հաստատվել Կողմերի համաձայնությամբ:

10. Սույն Հուշագիրը կազմվում է 6 (վեց) օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

Կողմերի ստորագրությունները և իրավաբանական հասցեները՝

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

Զ. ԲԱԹՈՅԱՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՍՑԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, 0010, ԵՐԵՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿ, ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆ 3

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՍՑԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, 0025,
ԵՐԵՎԱՆ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ 1

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____

Ռ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՍՑԵ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆ, 0010, ԵՐԵՎԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ, 17 ՇԵՆՔ

ՇԻՐԱԿԻ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Ժ/Պ

ՀԱՍՑԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, 3126, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ,
ԳՅՈՒՄՐԻ, ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 4

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Ժ/Պ

ՀԱՍՑԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, 2021, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ,
ՎԱՆԱՁՈՐ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ, 36 ՇԵՆՔ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. ՍԵԴՐԱԿՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

ՀԱՍՑԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆ, 0009, ԵՐԵՎԱՆ
ԿՈՐՅՈՒՆԻ ՓՈՂՈՑ, 19Ա ՇԵՆՔ